ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը մայրենիի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ Դասվար (Մայրենի)

ՀԵՂԻՆԱԿ ՋԵՄՄԱ ԴԱՎԹՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ <<ԽՆԱԾԱԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>

ՊՈԱԿ

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդագյուլյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……...……3
Սովորողների ստեղծագործական առաջադրանքների միասնական համակարգը……5
Կրտսեր դպրոցականի ստեղծագործական գործունեության տեսակի մեթոդների ու հնարների խմբերը……...…8
Տեքստեր հորինելու համար կիրառվող հնարները……..15
Ստեղծագործական երևակայության զարգացմանը նպատակաուղղված թեմաները….17
Եզրակացություն……23
Օգտագործած գրականության ցանկ……..24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասը ամբողջական համակարգ է և հանդիսանում է ուսուցման կազմակերպման հիմնական ձևը: Դասի նկարագրությունը դիպուկ և պատկերավոր ձևով տալիս է Մ. Վերզալինը. <<Դասը արեգակնային համակարգ է, որի շուրջ, որպես մոլորակներ, պտտվում են ուսուցման կազմակերպման բոլոր ձևերը>>:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Անչափ կարևոր է տարրական դասարանների մայրենիի դասերին աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը միտված ուսուցչի աշխատանքը: Անհրաժեշտ է սովորողների մեջ դաստիարակել այնպիսի որակներ, որոնք անմիջապես առնչվում են ստեղծագործական գործունեությանը: Դրանք են՝ դիտողականություն, շփվողականություն, հնարամտություն, ծուլությունը, դժվարությունները հաղթահարելու կամք, լավ մարզված հիշողություն, իրադրությունները իմաստավորելու և համակողմանի վերլուծելու սովորույթ և մշակույթ: Նմանատիպ կարողություններ կարելի է զարգացնել լեզվական ստեղծագործական խաղերի, տարբեր մրցույթների, վիկտորինաների, ցերեկույթների միջոցով:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները մայրենիի դասավանդման ընթացքում:

Նպատակից ելնելով առաջադրել ենք հետևյալ **խնդիրները.**

- վերլուծել կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստող հնարների համակարգը,
- ներկայացնել տեքստի ստեղծագործաբար վերարտադրմանը նպաստող մեթոդների ու հնարների համակարգը,
- համակարգել բառի գեղարվեստական հնարավորությունների բացահայտման նպատակով հատուկ ստեղծագործական բնույթի առաջադրանքների կիրառման հնարները:

Հետազոտական աշխատանքի **կիրառական նշանակությունը** պայմանավորված է աշխատանքում առաջադրված մի շարք մեթոդների ու հնարների առկայությամբ, որոնք կարելի է կիրառել տարրական դասարանների մայրենիի դասերին:

Աշխատանքն ամփոփված է եզրակացություններով:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հասարակական կյանքի արագընթաց փոփոխություններն անհատից պահանջում են ցանկացած իրավիճակում ճկուն գործելու, ծագող խնդիրները ստեղծագործաբար լուծելու հմտություն: Ուստի կրթական համակարգում խիստ կարևորվում է սովորողների ակտիվ ճանաչողական և ստեղծագործական գործունեությունը: Ներկայումս բավականին արդիական է կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեությանը նպաստող մտավոր կարողությունների զարգացմանը միտված հնարների որոնման խնդիրը: Ընդ որում, այդ գործունեությունը կարող է ծավալվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբի համագործակցությամբ: Արդի ուսուցման հիմնական նպատակն է՝ոչ միայն հաղորդել որոշակի գիտելիքներ, այլև ձևավորել անհրաժեշտ գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու և ստեղծագործաբար կիրառելու կարողություններ:

Ստեղծագործական կարողությունները պայմանավորված են անձնային որոշակի որակներով: Եթե վաղ տարիքում երեխայի ստեղծագործական հակումները վառ ձևով դրսևորվում են նրա սիրած զբաղմունքի՝ նկարչության, ապա կրտսեր դպրոցական տարիքում՝ գրական ստեղծագործական գործունեության մեջ:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործելու գործընթացի հիմնական դժվարությունը պայմանավորված է գրավոր և բանավոր խոսքի ոչ ճիշտ կառուցմամբ և բառապաշարի աղքատությամբ: Այս հարցերում ուսուցիչը պետք է խելամտորեն միջամտի: Պահանջվում է միասնական համակարգ, որն իր մեջ ներառի մի շարք մեթոդներ և հնարներ: Համակարգ ասելով հասկանում ենք ստեղծագործական առաջադրանքների հաջորդական կիրառումը՝ պարզից բարդ սկզբունքով:

Ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով հարկավոր է.

Առաջին. Սովորողների մեջ դաստիարակել այնպիսի որակներ, որոնք անմիջաբար առնչվում են ստեղծագործական գործունեությանը և որոշում դրա արդյունավետությունը: Դրանք են՝ դիտողունակություն, շփվողականություն,

խոսքային և ընդհանուր ակտիվություն, հնարամտություն, ծուլությունը և դժվարությունները հաղթահարելու կամք, լավ մարզված հիշողություն, իրողությունները իմաստավորելու և համակողմանի վերլուծելու սովորույթ և մշակույթ: Միևնույն ժամանակ ստեղծագործական հակումներ արթնանում են զգայական հարուստ ներաշխարհով, հրապուրվելու ունակությամբ, երևակայության և ճանաչողական հետաքրքրությունների զարգացածության բարձր մակարդակ ունեցող անձանց մեջ: Այս որակներն ու կարողությունները կարելի է ձևավորել և զարգացնել լեզվական խաղերի, տարբեր մրցույթների, վիկտորինաների, ցերեկույթների կազմակերպմամբ և այլ միջոցներով:

Երկրորդ. Պայմաններ ստեղծել անհատականության դրսևորման ու անձի ինքնարտահայտման համար: Երբ երեխան որևէ ներկայացման մեջ ստանձնում է տվյալ հերոսի դերը, նա յուրովի է արտահայտում ընտրված կերպարի զգացմունքները: Երևակայությամբ որոշակի դրվագներ պատկերելով՝ նա իրացնում է իր անձնական ընկալումը և վերաբերմունք դրսևորում տվյալ հերոսի կամ իրադարձության հանդեպ: Այդ գործողությունների պարբերական և հետևողական կրկնությունները կուտակում են հուզական ու իմացական փորձ և ձևավորում համապատասխան մշակույթ: Դրանք ի հայտ են գալիս նաև տարբեր տիպի ստեղծագործական շարադրություններ գրելու, գրքի ընթերցանության, ներկայացման կամ ֆիլմի մասին կարծիքներ արտահայտելու, ընթերցածի վերաբերյալ նկարաշարի ստեղծման ընթացքում:

Երրորդ. Երեխաներին դրթել ճանաչողական գործընթացում կիրառել հետազոտական գործունեության տարրեր, ինչպես նաև համատեղ ջանքերի գործադրմամբ հասնել առաջադրված խնդիրների իրականացմանը:

Տարրական դպրոցի շրջանավարտի գեղագիտական ընկալման ստեղծագործական տարրական կարողությունները՝ ըստ հանրակրթության պետական չափորոշիչի: Ըստ Հանրակրթության պետական չափորոշիչի՝ տարրական դպրոցի շրջանավարտն ի թիվս այլ կարողությունների և հմտությունների պետք է ունենա նաև <<… գեղագիտական ընկալում և ստեղծագործական տարրական կարողություններ՝

ա. զբաղվի անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ՝ նկարել, ծեփակերտել, երգել, նվագել, հանդես գալ բեմադրություններում,

բ. Նկարչական միջոցներով, երևակայական պատկերներով արտահայտի գաղափարներ,

գ. ունենա և արտահայտի սեփական կարծիք արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ,

դ. Հաճույք ստանա ստեղծագործական աշխատանքից և հաճույքով դրանք ցուցադրի>>:

Չափորոշչային այս պահանջներն իրականացնելու և ցանկալի արդյունքի հասնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ. դրանք են՝

1. **Աշակերտի դերի փոփոխություն.** նա պետք է դառնա նորի ճանաչման գործընթացի ակտիվ մասնակիցը, ով հնարավորություն ունի ընտրություն կատարելու և իր հետաքրքրություններն ու պահանջմունքները բավարարելու:
2. **Հոգեբանական բարենպաստ մթնոլորտ.** այստեղ իշխում են բարիդրացիական հարաբերություններ:
3. **Ներքին դրդապատճառներ:** Դրանց առկայությամբ է հնարավոր ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացումը:
4. **Աշակերտներին չափավոր օգնության ցուցաբերում:** Անհրաժեշտ է օգնություն ցույց տալ աշակերտներին, սակայն ոչ մի դեպքում չի կարելի երեխայի փոխարեն անել այն, ինչ նա կարող է անել:
5. **Դասի ընթացքում աշխատանքի բազմազան ձևերի՝** խմբային, անհատական, ֆրոնտալ, ներդաշնակ համակցում:
6. **Միջառարկայական կապերի պահպանում:** Ստեղծագործական խնդիրների լուծման ընթացքում անհրաժեշտ է կիրառել տարբեր բնագավառներից ձեռք բերված գիտելիքները: Եվ որքան դժվար է խնդիրը, այնքան շատ գիտելիքներ պետք է կիրառել այն լուծելու համար:
7. **Հաջողության իրավիճակի ստեղծում:** Ստեղծագործական բնույթի առաջադրանքներ անհրաժեշտ է հանձնարարել ամբողջ դասարանին: Չի կարելի համագործակցել միայն առավել օժտված երեխաների հետ: Այդ աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է խրախուսել բոլորին:

8. **Առաջադրանքների խելամիտ ընտրություն:** Դրանք լինելու են բարդ, բայց միևնույն ժամանակ աշակերտների ներուժին համապատասխան, և պետք է նպաստեն ստեղծագործական գործունեության նկատմամբ հետաքրքրության աճին:
9. **Ստեղծագործական առաջադրանքների բազմազանություն:** Դրանք պետք է լինեն բազմազան, ինչպես իրենց բովանդակությամբ և ձևով, այնպես էլ բարդության աստիճանով:
10. **Ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստող հնարների պարբերական և համակարգված կիրառություն:** Պահանջվող առաջադրանքների ոչ հաճախակի , դեպքից դեպք կատարումը չի նպաստի սովորողների ստեղծագործական, գործունեության ակտիվացմանը:

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՒ ՀՆԱՐՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

Ըստ ստեղծագործական գործունեության տեսակի կարելի է առանձնացնել 4 խումբ մեթոդներ և հնարներ, որոնք նպատակաուղղված են մայրենիի դասերին կրտսեր դպրոցականների ստեղծագործական ակտիվության խթանմանը և համապատասխան ունակությունների զարգացմանը.

1. Ստեղծագործության պատկերների բանավոր վերարտադրում
2. Թատերական գործունեություն
3. Նկարչական գործունեություն
4. Երաժշտական ստեղծագործական գործունեություն

Դրանցից յուրաքանչյուրի նկարագրությունը կատարենք ավելի մանրամասն:

Ստեղծագործական պատկերների բանավոր վերարտադրում

Գեղարվեստական տեքստերի շուրջ աշխատանքի ընթացքում արդյունավետ է ստեղծագործական ընթերցանության հնարի կիրառումը: Այդ ժամանակ տեղի է ունենում յուրօրինակ համագործակցություն ընթերցողի և տեքստի հեղինակի միջև: Այս հնարի օգտագործմամբ ՝ երեխաները տեքստի շուրջ կատարում են

բազմազան ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, որոնք էլ նպաստում են ընթերցածի վերլուծությանը և ստեղծագործաբար ինքնարտահայտվելու կարողությունների զարգացմանը: Այս մեթոդական հնարի նպատակը գեղարվեստական երկի ընկալման ակտիվացումն է ինչպես մինչև ստեղծագործության ուսումնասիրումը, այնպես էլ դրա վերլուծությունից հետո: Կարդալու ժամանակ երևակայական պատկերների ստեղծումն ընթերցողի ստեղծագործական ակտիվության արդյունքն է: Այն կարող է դրսևորվել ընթերցածի վերաբերյալ տպավորությունների ներկայացմամբ, շարունակության հորինմամբ, սեփական կենսափորձից նմանօրինակ իրավիճակների մտաբերմամբ, պատկերների բառային << նկարչությամբ>>, սյուժեի ստեղծագործաբար վերարտադրությամբ: Ստեղծագործական ընթերցանությունը բարձր գեղարվեստական ճաշակի ձևավորման հիմքն է: Այն արթնացնում է աշակերտների հետաքրքրասիրությունը:

Գրական ստեղծագործությունը պահանջում է բառի հնարամիտ կիրառման և դրա գեղագիտական իմաստների բացահայտման արվեստ: Ուստի առաջին դասարանից սկսած անհրաժեշտ է աշակերտներին հանձնարարել ստեղծագործական առաջադրանքներ՝ գեղարվեստական երկերում հաճախակի օգտագործվող բառերի, դրանց նշանակության և ձևի վերաբերյալ: Բառի գեղարվեստական հնարավորությունների բացահայտման նպատակով երեխաները կատարում են հատուկ ստեղծագործական բնույթի առաջադրանքներ: Նրանք պետք է բանավոր և գրավոր պատասխանեն առաջին հայացքից տարօրինակ թվացող հետևյալ հարցերին. <<Ի՞նչ տրամադրություն եմ ունենում, երբ լսում եմ <<աղմուկ>>, <<շրշյուն>>, <<թրթիռ>> բառերը>>, <<Ի՞նչ եմ զգում կամ պատկերացնում, երբ լսում եմ <<ալիք>> բառը>> և այլն:

- **Տեքստի բովանդակությանը վերաբերող հարցերի և թեստերի կազմում:**

Առաջին դասարանից երեխաներին հարկավոր է սովորեցնել ոչ միայն գրագետ պատասխանել հարցերին, այլև կազմել հարցեր՝ տրված տեքստի շրջանակում: Այս աշխատանքը նպաստում է գլխավորը երկրորդականից տարբերելու կարողությունների ձևավորմանը: Երեխաները կարող են կազմել այնպիսի հարցեր, որոնք ենթադրում են և մանրամասն, և կոնկրետ (այո, ոչ) պատասխաններ:

Չորրորդ դասարանից արդեն երեխաներին դուր է գալիս ընթերցած երկի վերաբերյալ թեստ կազմելու աշխատանքը, երբ պահանջվում է ընտրել միակ ճիշտը:

Տեքստի ստեղծագործաբար վերարտադրում.

Նպատակն է՝ ընթերցած ստեղծագործության նկատմամբ աշակերտների մեջ առաջացնել զգայական արձագանք, օգնել նրանց՝ խորությամբ հասկանալու տեքստի իմաստը, հերոսի հետ միասին ապրել այն զգացումները, որոնք հեղինակը նկարագրել է տեքստում: Այս աշխատանքի համար ընտրվում են այն ստեղծագործությունները, որոնք ընթերցողին հնարավորություն են ընձեռնում իրեն պատկերացնել գրական հերոսի դերում,հասկանալ նրա հոգեկան վիճակը, հերոսի աչքերով նայել շրջապատի մարդկանց, և այն իրադարձություններին, որոնց մասին խոսվում է ստեղծագործության մեջ: Աշակերտներից պահանջվում է երևակայական մտածողություն այն պատկերացումների հիման վրա, որոնք ձևավորվել են տեքստի ընթերցանության և վերլուծության ընթացքում:

Տեքստը կարելի է ստեղծագործաբար վերարտադրել ըստ փոփոխված պլանի, կամ փոխելով ստեղծագործությունը պատմողի դեմքը (տարատեսակներից են՝ պատմել որպես մասնակից կամ որպես ականատես. Օրինակ՝ <<Պատմիր այնպես, կարծես դու ես պատմվածքի հերոսը>>): Կրտսեր դպրոցականին սովորեցնել պարզ և հստակ շարադրել սեփական մտքերը, համապատասխան բառերով արտահայտել իր հույզերն ու ապրումները, դրսևորել խոսքի մշակույթ և, ընդհանրապես, հաղորդակցվել կիրթ ձևով, սա բարդ ու դժվարին գործընթաց է, որն ուսուցչից պահանջում է լուրջ ջանքեր, լարված ու հետևողական աշխատանք և, որ ամենակարևորն է, արդյունավետ միջոցներ ու մեթոդներ: Տեքսի ազատ վերարտադրումը կօգնի գրական տեքստի լիարժեք ընկալմանը, կզարգացնի սովորողների ստեղծագործական կարողությունները:

Ստեղծագործության շարունակում: Ընթերցած նյութը երբեմն կարող է խթան հանդիսանալ երեխաների ինքնուրույն ստեղծագործական գործունեության համար. Նրանք կմտածեն այդ երկի շարունակությունը, այսինքն՝ ավարտը: Այն կարող է լինել և հեքիաթ, և պատմվածք, և նույնիսկ բանաստեղծություն: Անկասկած, ոչ բոլոր ստեղծագործություններն է հնարավոր շարունակել:

Ստեղծագործական շարադրություն: Ստեղծագործական շարադրություն գրելիս երեխաները մեկ անգամ ևս խորամուխ են լինում ընթերցանության մեջ և վերլուծում գրական երկը հատուկ ուղիով. Նրանք պետք է փորձեն լուծել այն խնդիրը, որն իր բնույթով մոտ է հեղինակի կողմից իր ստեղծագործության միջոցով առաջ քաշած խնդրին:

Ստեղծագործական շարադրությունները բարձրացնում են հետաքրքրությունը տեքստի ընթերցանության և վերլուծության նկատմամբ, զարգացնում երեխաների դիտողունակությունը: Նրանց ուշադրությունը կենտրոնացվում է գրական ստեղծագործության այնպիսի կողմերի վրա, որոնք մինչ այդ չէին նկատել: Երեխաներն իրենց ցանկությամբ կարող են նաև ձևավորել ու նկարազարդել իրենց գրած շարադրությունները:

Տեքստի բովանդակության պլանի կազմումը ստեղծագործական աշխատանքի արդյունավետ տեսակներից է: Լայն տարածում ունի ընթերցվող տեքստի շուրջ սովորական նկարային պլանի կառուցումը: Կիրառվում է նաև հակառակ հաջորդականությունը՝ տեքստի ընթացքում՝ ըստ ուսուցչի տված պլանի (այն նախապես գրվում է գրատախտակին): Այս աշխատանքը նպաստում է ընթերցածի բովանդակության իմաստավորված վերարտադրմանը: Չէ՞ որ պլան կազմելով՝ աշակերտը կատարում է ընթերցած նյութի իմաստային խմբավորում, ինչը ծառայում է որպես մտապահման հնար:Աշակերտները վարժվում են փնտրել ու գտնել ներքին կապեր ընթերցվող տեքստի տարբեր մասերի միջև և իմաստավորել դրանք:

Աշխատանք ընթերցողի օրագրում: Երրորդ դասարանից սովորողներն սկսում են ընթերցած ստեղծագործությունների վերաբերյալ գրառումներ կատարել <<ընթերցողի օրագրում>>: Նրանք գրում են հեղինակի Ազգանունը, ստեղծագործության վերնագիրը և գլխավոր հերոսների անունները: Ցանկալի է, որ լինեն նաև նկարազարդումներ՝ համապատասխան մակագրություններով: Աշակերտները կարող են դուրս գրել հետաքրքիր մտքեր և արտահայտություններ:: Դրանք իրենց բովանդակությամբ ու ձևավորմամբ հիշեցնում են <<Հրաշք տետրերը>>, որոնք հաջողությամբ կիրառել են ուսուցիչներից շատերը:

Մեղմագիր: Սա գրական ստեղծագործության բովանդակության հակիրճ շարադրանքն է: Երեխաներին պետք է սովորեցնել սեղմագրի կառուցման սկզբունքը: Այն կարող է սկսվել հետևյալ կերպ.

Այս ստեղծագործության մեջ պատմվում է այն մասին, որ …

Այս պատմվածքը …

Հեղինակը … պատմում է, որ …

Այս ստեղծագործության գլխավոր հերոսը …

Զարմանահրաշ իրադարձությունները կատարվում են … և այլն:

Կարելի է կիրառել նաև <<**Գրական փորձ**>> հնարը: Համեմատության համար երեխաներին տրվում է որևէ ստեղծագործությունից մի դրվագ, և նրանց ուշադրությունը հրավիրվում է հեղինակի կողմից բառերի ընտրության վրա: Դիտարկվում են տարբերակներ, թե ինչպես է հնչում տեքստն առանց նշված բառերի, և ինչով կարելի է փոխարինել դրանք: Այնուհետև երեխաներն այս կամ այն արտահայտությունը որոնում են այլ տեքստերում, մտածում սեփական օրինակներ, իսկ հետո փորձում օգտագործել դրանք իրենց խոսքում: Նպատակահարմար է այս հնարն օգտագործել երրորդ և չորրրդ դասարաններում:

Երեխաներին առաջադրվում է որևէ պատկեր և պահանջվում երևակայության ուժով ներկայացնել տվյալ իրավիճակը: Սա նույնպես գեղարվեստական արտահայտչամիջոցներն ընկալելու և վերարտադրելու ունակության զարգացման արդյունավետ հնար է: Օրինակ՝ <<Անձրևը թմբկահարում է պատուհանին. Ինչպե՞ս ես դու դա պատկերացնում>>:

Բառերի մոգական հատկության վրա երեխաների ուշադրությունը սևեռելու ուշագրավ միջոց է նաև ընթերցած ստեղծագործության բառապաշարի շուրջ խաչբառ կազմելու առաջադրանքը:

Ստեղծագործական առաջադրանքների համակարգում հատուկ տեղ է գրավում <<**Խառնաշփոթ**>> բառախաղը: Գրատախտակին կամ առանձին թերթիկների վրա գրվում են առած-ասացվածքներում օգտագործված բառեր՝ առանց միջբառային տարածքների կամ կետադրության: Երեխաները պետք է խառնաշփոթ շարքից ընտրեն այն բառերը, որոնց միջոցով հնարավոր է ստանալ ծանոթ ասացվածքը:

<<Միավորիր>> առաջադրանքի պահանջն է երկու առարկայի զուգակցմամբ կազմել որքան հնարավոր է շատ նախադասություններ: Օրինակ՝ քանոն-գիրք, գլխարկ-կամուրջ, արդուկ-ավտոբուս և այլն:Նախադասությունները պետք է լինեն անսովոր և ծիծաղելի:

<<Սահմանում>>. բառաքարտերից ընտրված առարկան (ավտոմեքենա, խնձոր, լիճ, մանուշակ և այլն) մեկ րոպեի ընթացքում պետք է ներկայացնել այնպես, որ բոլորը կռահեն, թե ինչի մասին է խոսքը: Չի կարելի առարկայի անունը տալ կամ ոչ խոսքային միջոցներով ցույց տալ այն:

<<Ստեղծագործական նվաճումների շքերթ>>: Երեխաներն առաջադրված բառերին (հեռախոս, մանկապարտեզ, կարկանդակ և այլն) տալիս են ոչ ստանդարտ մեկնաբանություն, այնուհետև բացատրական բառարաններից գտնում դրանց ճշգրիտ բառահոդվածները:

<<Հաստ ու բարակ հարցեր>> հնարը զարգացնում է սովորողների՝ հարցեր առաջադրելու կարողությունը: Այստեղ հարցն աշակերտների գիտելիքների հայտորոշման միջոց է: <<Բարակ>> հարցերը վերարտադրողական բնույթի են՝ պահանջում են միաբառ պատասխաններ, իսկ <<հաստ>> հարցերը՝ մտավոր գործողություններ, լրացուցիչ գիտելիքների օգտագործում և վերլուծելու կարողություն: Դասարանը բաժանվում է խմբերի: Յուրաքանչյուր խմբի առաջարկվում է տեքստի տվյալ հատվածի շուրջ նախապատրաստել <<հաստ ու բարակ>> հարցեր:

Ստեղծագործական կարողությունների զարգացմանը միտված դասերի ընթացքում բավականին մեծ տեղ է հատկացվում ժողովրդական բառուբանին: Հատկապես լուրջ աշխատանք է տարվում առած-ասացվածքների, հանելուկների, ժողովրդական հեքիաթների, առակների, ավանդությունների, զրույցների և լեգենդների մեկնաբանման ուղղությամբ:

Հանելուկների շուրջ աշխատանքը երեխաների երևակայության և հնարամտության զարգացմանը նպաստող հրաշալի միջոց է: Այդ ընթացքում նրանք սովորում են խոսել ավելի գեղեցիկ ու արտահայտիչ: Հանելուկներ հորինելով՝ նրանք իրենց ուշադրությունը սևեռում են հայտնի կամ իրենց երևակայությամբ ստեղծված առարկայի վրա և մտքի ճիգեր գործադրում: Հակիրճ ու սրամիտ այս չափածո ժանրը երեխաներին ստեղծագործական

հաճելի մտորումների հնարավորություն է ընձեռնում:Աշխատանքը կազմակերպվում է մի քանի փուլով. հանելուկի գուշակում դիտարկում, սեփական հանելուկի հորինում՝ սկզբում խմբով, ապա՝ ինքնուրույն: Վերջին փուլի նպատակն է՝ աշակերտներին սովորեցնել հանելուկի հորինման քայլաշարը: Աշխատանքը կատարվում է աղյուսակի միջոցով.

Ինչի՞ նման ….	Ինչո՞վ է տարբերվում …

Հանելուկների շուրջ աշխատանքը կիրառվում է նաև <<հանգ>> հասկացությունն ամրապնդելու նպատակով: Երեխաները հաճույքով են հորինում հանելուկներ՝ կառուցելով համապատասխան հանգեր:

Սովորողների ստեղծագործելու ցանկությունն ակտիվացնելու լավագույն միջոց է առած- ասացվածքների շուրջ կազմակերպվող աշխատանքը.

1. Խմբով հորինել որևէ պատմություն, որի գլխավոր իմաստը համապատասխանի տրված ասացվածքի գաղափարին: <<Մայրենի-3>> դասագրքում զետեղված <<Անտառն ու քամին>> առակի վերլուծության ընթացքում կատարվում է տեքստի բովանդակության և <<միասնությունը ուժ է>> առածի համապատասխանեցում: Այնուհետև երեխաներն իրենք են փորձում հորինել այնպիսի պատմություն, որի ասելիքը ունկնդիրներին համոզի, որ իրոք միասնությունը ուժ է:

2. Ընտրել հեքիաթներ, առակներ, պատմվածքներ, որոնց համապատասխանում է տրված առած-ասացվածքը:

3. Որոշել, թե առած-ասացվածքներից որին է համապատասխանում տրված հեքիաթի կամ առակի իմաստը:

Մայրենիի առաջին իսկ դասերից կարելի է առաջադրել բանաստեղծական երկտողերի ստեղծման, համապատասխան հանգերով հանելուկների հորինման աշխատանք: Իսկ մինչ այդ անհրաժեշտ է հետևել, թե արդյոք երեխաները հասկացե՞լ են տվյալ բանաստեղծության իմաստը, դիտարկե՞լ են դրա կառուցվածքը, գեղարվեստական առանձնահատկությունները, արտահայտչամիջոցները (համեմատություն, մակդիրներ, փոխաբերություն, անձնավորում): Հանգերի ստեղծման

հմտությանը նպաստում են հատուկ վարժությունները: Ահա դրանցից մի քանիսը.

- Հորինի՛ր հանգեր՝ հետևյալ բառի համար (շողիկ, պարան-…):
- Միավորի՛ր համապատասխան հանգերով բառերը:
- Խաղ՝ <<Վանկային աճուրդ>>. Հաղթում է նա, ով համապատասխան հանգով բառը կասի վերջինը (պիկ-կապիկ, շապիկ և այլն):
- Հորինի՛ր մի զվարճալի նախադասություն, որի բոլոր բառերը սկսվեն միևնույն տառով (օրինակ՝ Կարինեն կրկեսում կորյունին կերակրեց կարմիր կաղամբով):
- Խաղ՝ <<Չորրորդն ավելորդ է>> (դանակ, կատակ, ապտակ, մկրատ):
- Վերականգնի՛ր բանաստեղծության խառնված տողերը:
- Ավարտի՛ր բանաստեղծությունը. Տրվում է առաջին տողը, երկրորդը պետք է ասեն աշակերտները: Ընտրվում է ամենահաջողված տարբերակը:

ՏԵՔՍՏԵՐ ՀՈՐԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՀՆԱՐՆԵՐԸ

Ստեղծագործական գործունեություն ծավալելու փորձ. կրտսեր դպրոցականները փորձ են ձեռք բերում ոչ միայն գրական երկերի վերլուծության, այլև սեփական տեքստերի ստեղծման ընթացքում: Դրանք կարող են լինել հեքիաթներ, պատմվածքներ, բանաստեղծություններ: Առաջին դասարանից երեխաները սովորում են հորինել ընթերցած գեղարվեստական ստեղծագործության սյուժեի նման պատմվածքներ:

Սեփական տեքստերի հորինման նպատակով կարելի է կիրառել հետևյալ հնարները.

1.<<Գրեք նամակ>>: Սովորողները նամակ են գրում որևէ մեկին՝ ստեղծագործության հերոսի անունով: Սա հնարավորություն է ընձեռնում իրեն դնել ուրիշի տեղը և արտահայտել նրա մտքերը:

2. <<Գրե՛ք հեքիաթ այլ սյուժեով>>: Երեխաները ստանում են թղթեր, որոնց վրա նշված են սիրելի հեքիաթների անունները, բայց նաև գրված են

տվյալ ենթատեքստից դուրս, առօրյա գործածական բառեր. Քաջ Նազար, Ուստիան, հեծանիվ, վագր:

Երեխաները պետք է գրեն հեքիաթ՝ կիրառելով առաջադրված բառերը:

1. **<<Հեռագրերի, հրահանգների, հուշագրերի ստեղծում>>** հնարի կիրառմամբ՝ երեխաներն ընթերցած ստեղծագործությունից ընտրում են առավել կարևոր տեղեկությունը և ներկայացնում հակիրճ ձևով:
2. <<Շրջանաձև գրություն >>: Երեխաներից յուրաքանչյուրը տվյալ խմբային աշխատանքի ընթացքում պետք է ոչ միայն ինքնուրույն խորհի տրված թեմայի շուրջ, այլև իր մտքերը համաձայնեցնի խմբի անդամների հետ: Նրանց տրվում է տետր և գրիչ: Ամեն մեկն ըստ թեմայի գրում է մի քանի նախադասություն, այնուհետև տետրը փոխանցում հարևանին, որը պետք է շարունակի իր խոհերը: Տետրն ի վերջո փոխանցվում է առաջին միտքը գրողին:
3. **<<5 բոպեանոց շարադրանք>>:**Գրավոր խորհրդածության տեսակ է՝ տրված թեմայով ազատ շարադրանք: Երեխան ընթերցածի վերաբերյալ ներկայացնում է իր տպավորությունները:
4. **<<Կարծիք-տեսակետի արտահայտում>>:** Որևէ գրքի, ներկայացման, նկարի և այլ ստեղծագործության շուրջ մտքեր արտահայտելու արդյունավետ հնար է: Այն հնարավորություն է ընձեռում երեխային սովորեցնել ընթերցած ստեղծագործության վերաբերյալ արտահայտել իր սեփական տեսակետը և շարադրել կարծիք: Այդ կերպ աշակերտը ոչ միայն խորությամբ ընկալում է ընթերցած ստեղծագործության իմաստը, այլև գնահատական է տալիս դրան:

Ընդ որում, կարելի է.

1. Ներկայացնել հերոսին և արտահայտել վերաբերմունք ստեղծագործության նկատմամբ:
2. Համառոտ վերարտադրել ստեղծագործության սյուժեն՝ իրադարձություններին տալով զգայական գնահատական:
3. 3.Բնութագրել հերոսին և արտահայտել վերաբերմունք նրա նկատմամբ:

Կարելի է կիրառել հարցեր, որոնք կօգնեն երեխաներին հեշտությամբ կատարելու տրված առաջադրանքը.

- Քեզ դուր եկա՞վ պատմվածքը: Ինչու՞:
- Ի՞նչ արտահայտչական միջոցներ է կիրառել հեղինակը, որպեսզի նկարագրի …
- Կարելի՞ է, արդյոք, պատմվածքն անվանել հետաքրքիր, արտասովոր և այլն:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՏԱԿԱՌԻՂՂՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

1. Շարունակիր շարքը (ամպը մռայլվում է, աստղերը …, արեգակը … և այլն):
2. Երևակայիր՝ ով ինչ է մտածում (ճանճը առաստաղի վրա, ձուկը ակվարիումում):
3. Ի՞նչ կասեն միևնույն հերոսի մասին նույն հեքիաթի մյուս հերոսները:

Գայլը և կարմիր գլխարկը՝ տատիկի մասին:

4. Ստեղծիր քեզ համար որևէ հերոս և նրա անունից հորինիր պատմվածք:
5. Երևակայիր, թե ինչպիսին կլինի մարդը՝ կատվի, շան, ձիու աչքերով:
6. Հորինիր լեգենդ ծաղիկների մասին:
7. Հորինիր երևակայական կենդանի. Նկարիր և նկարագրիր նրա կախարդական ունակությունները:
8. Առաջադրանք՝<<Եթե…(եթե ես մթության մեջ տեսնեի ինչպես բուն, ապա …)>>:

Թատերական ստեղծագործական գործունեություն

Խաղ-ներկայացում

Սովորողների ստեղծագործական ներուժի դրսևորմանը նպաստելու, բառի գեղագիտական ընկալման հանդեպ հետաքրքրություն զարգացնելու նպատակով կիրառվում է հետևյալ խաղը. Յուրաքանչյուր աշակերտ պետք է վերարտադրի այս կամ այն կերպարը՝ դրսևորելով ստեղծագործական ձիրք, և յուրատիպ ձևով ներկայացնի հեղինակի ասելիքը: Ըստ աշակերտների ակտիվության և ինքնուրույնության կարելի է առանձնացնել տվյալ խաղի տարբեր տարատեսակներ.

- Նկարագարդման վերլուծություն՝ դրանում ներկայացված հերոսների դիմախաղի արտչահայտչականության տեսանկյունից:
- Ստեղծագործության ընթերցում դերերով՝ նախապես բանավոր նկարագրելով հերոսների հագուստները , դիմախաղը, շարժուձևը և այլն:
- Որևէ ստեղծագործության **<<կենդանի պատկերների>>** ստեղծում: Առաջադրվում է առավելագույնս ճշգրիտ ներկայացնել հերոսների դիրքը և դիմախաղը: Ներկայացված պատկերների մեջ ընտրվում է ամենահաջողվածը:
- Ներկայացման սցենարի կազմում և դեկորացիաների, հագուստի բանավոր նկարագրում:

Կարելի է կիրառել **<<Թատրոն-էքսպորտ>>** հնարը: Այս հնարի կիրառման ընթացքում երեխաներից չի պահանջվում հատուկ նախապատրաստում: Սովորաբար այս աշխատանքը կարելի է սկսել <<Շաղգամը>> հեքիաթի բեմականացումից, քանի որ այդտեղ հերոսները չեն խոսում: Երեխաներին բաժանվում են հեքիաթի հերոսների դիմակները (բաշխվում են դերերը): Կադրից դուրս ձայնով լսվում է հեքիաթը, իսկ <<դերասանները>> կատարում են այն, ինչն ազդարարվում է: Աշխատանքի այս ձևն օգնում է երեխաներին՝ վստահել իրենց ուժերին:

Հեքիաթները բեմականացվում են նաև **տիկնիկների** միջոցով: Այս աշխատանքն առաջին դասարանցիներին օգնում է՝ հղկելու իրենց շարժումները և արտահայտիչ ներկայացնելու տիկնիկների վարքագիծը: Սա նաև միջոց է՝ հարստացնելու սեփական ներաշխարհը: Երեխան իր խաղով՝ որպես ստեղծագործող, կենդանացնում է տիկնիկին:

Արտասովոր խաղ-ներկայացում: Սովորական խաղ-ներկայացման ժամանակ դերերը խաղարկվում են ըստ որոշակի սցենարի: Անսովոր խաղ-ներկայացումը երեխաներին հնարավորություն է ընձեռնում ազատ ինքնարտահայտվելու: Այն թույլ է տալիս վերափոխել հեքիաթը և խաղալ այնտեղ, ինչպես հուշում են սեփական երևակայությունը, փորձը և հույզերը: Անսովոր խաղ-բեմականացում կարելի է կազմակերպել ըստ հետևյալ առաջադրանքների.

1. Ներկայացրու տիկնիկը կորցրած աղջկան. Նա ամենուրեք փնտրում է իր տիկնիկին, բայց ոչ մի կերպ չի կարողանում գտնել. <<ինչ-որ մեկը տեսե՞լ է իմ տիկնիկին>>:
2. Մարմնավորիր նապաստակին, որը շատ է ուրախանում և <<շնորհակալություն>> հայտնում, երբ տղան իրեն գազար է տալիս:
3. Մարմնավորիր կատու և շուն, որոնք չարացած միմյանց են նայում:
4. Կերպավորիր թոքրիկ մուկիկի, որը կատվից վախենում է:

Ստեղծագործական դասերի ընթացքում երեխաներն ընտրում թն հեքիաթը և դերային խաղով ներկայացնում մի դրվագ այդ հեքիաթից:

Ստեղծագործության բեմականացում: Ստեղծագործական բնույթի աշխատանքի այս տեսակը պետք է առանձնացնել որպես առավել կարևոր ցուցադրական միջոց. Ընդ որում, այն կարելի է իրականացնել բոլոր դասարաններում: Թատերական ներկայացման շնորհիվ ստեղծագործության բոլոր կերպարները հանդես են գալիս համապատասխան գործողություններով: Բեմականացումը կարելի է անցկացնել.

1. Միայն բառերի միջոցով, այսինքն՝ դերերով ընթերցանության և բեմադրության ձևերով:
2. Միայն մնջախաղի միջոցով:
3. Բառերի և մնջախաղի զուգակցմամբ:

Երեխաներին առաջարկվում է պատկերացնել հրաշալի հեքիաթային տեսարան, երևակայությամբ ցուցադրել հեքիաթի հերոսների գործողությունները, ներկայացնել նրանց բնավորությունը և տրամադրությունը՝ քայլվածքի, դիմախաղի ու ձայնի միջոցով: Դերային խաղերի ընթացքում պահանջվում է կերպարանափոխություն և ներթափանցում ստեղծագործության հերոսի ներաշխարհ: Ձևավորվում է պատասխանատվություն ընդհանուր գործի նկատմամբ: Այս աշխատանքի ընթացքում հնարավոր է դառնում յուրաքանչյուր աշակերտի հանձնարարել իր հոգուն և ուժերին հարազատ ստեղծագործական առաջադրանք:

Կարելի է կիրառել ներկայացման նախապատրաստման հետևյալ քայլաշարը.

1. Նյութի ընկալում, որը պետք է ցուցադրվի դերային խաղի միջոցով:

2. Ստեղծագործության վերլուծություն (միջավայր, հերոսների և նրանց արարքների կերպարներ):

3. Խնդիրների առաջադրում. Ի՞նչ է անհրաժեշտ հաղորդել՝ ցույց տալով տվյալ ներկայացումը:

4. Արտահայտչական միջոցների ընտրություն (ինչպե՞ս դա անել);

5. Փորձեր:

6. Ամփոփիչ ցուցադրում:

7. Արդյունքների ամփոփում և վերլուծություն:

Հետաքրքիր աշխատանք է դերերով ընթերցանությունը, որը ուղեկցվում է զգայական վիճակի, հերոսների բնավորության, նրանց ձայնի հնչերանգի վերրլուծությամբ:

Դերերով ընթերցանություն հնարավոր է իրականացնել բոլոր այն ստեղծագործություններին վերաբերող աշխատանքի ընթացքում, որոնցում առկա է երկխոսություն:

Երեխաները շատ են սիրում **<<մատիկներով խաղը>>:** Այս խաղի նպատակն է՝ ցույց տալ մատների արտահայտչական հնարավորությունները, սովորեցնել առանց վախենալու գործողություններ կատարել դրանցով, ստեղծել ցանկացած ստեղծագործության հերոսների մինի- կերպարներ՝ ներդաշնակեցնելով խոսքն ու շարժումները, և ցուցադրել տարբեր զգայական կերպարներ: Խաղի ընթացքում կիրառվում են արտասովոր խաղային առարկաներ, օրինակ՝ փոքրիկ թենիսի գնդակներ, որոնց մեջ կարելի է անցք բացել և հագցնել մատիկներին:

Գրական ստեղծագործության լիարժեք ընկալմանը ու ստեղծագործական երևակայության զարգացմանը նպաստում են նաև գրական խաղերը: Նշենք այդ խաղերից մի քանիսը.

Գիտելիքների ստուգման համար կիրառվում է իր ծավալով և թեմայով առավել բարդ՝ **<<Գրական ֆուտբոլ>>** խաղը: Դասարանը բաժանվում է երկու խմբի: Առաջինը <<Հարձակվողների>> թիմն է, որը հարցեր է առաջադրում հակառակորդին, երկրորդը՝ << Պաշտպանների>>, որը պատասխանում է այդ հարցերին: Յուրաքանչյուր սխալ պատասխան համարվում է <<գոլ>>:

<<Իմաստության ծառ>>: Երեխաները մեկ անգամ ևս ուշադիր ընթերցում են տեքստը: Այնուհետև յուրաքանչյուրը թղթի վրա գրում է տեքստի վերաբերյալ որևէ հարց: Բոլոր հարցերն ամրացվում են ծառին: Աշակերտների մի մասը ծառին մոտենալով <<քաղում է>> հարցը և փորձում պատասխանել: Մյուսները գնահատում են և հարցը, և պատասխանը: Վերջում որոշում են, թե ով է դասարանի ամենագիտունը: Այս աշխատանքը կարելի է կազմակերպել և՛ զույգերով, և՛ քառյակներով, և՛ շարքերով:

<<Լրագրողներ>> խաղի ընթացքում բոլոր նրանք, ովքեր ցանկանում են հանդես գալ ստեղծագործության հերոսների դերերում, հրավիրվում են գրատախտակի մոտ, իսկ մյուսները հանդես են գալիս որպես լրագրողներ: Վերջիններիս խնդիրն է հերոսներին առաջադրելիհետաքրքիր, ոչ ստանդարտ հարցեր, որոնց պետք է տրվեն լիարժեք և հստակ պատասխաններ:

<<Ստեղծագործության փոխակերպումներ>>: Խաղի ընթացքում տրվում են հետևյալ առաջադրանքները.

1. Նկարագրիր գլխավոր հերոսի բնավորությունը մինչև հանդիպումը … և հանդիպումից հետո:
2. Վերարտադրիր տեքստի բովանդակությունն այնպես, որ բարի հերոսները դառնան չար և հակառակը:
3. Պատմիր հեքիաթի բովանդակությունը՝ հերոսների կազմի մեջ ընդգրկելով մեկ այլ կերպար:
4. Համեմատիր մի քանի ստեղծագործություն: Սա այնպիսի ստեղծագործական աշխատանք է, որն ունի հետազոտական տարրեր: Օրինակ՝ համեմատիր հեքիաթների սկիզբը:
5. Դուրս գրիր հեքիաթի հենակետային բառերը և դրանցով հորինիր մեկ այլ հեքիաթ:
6. Լուծիր <<հեքիաթային խնդիրները>>՝ չփոխելով կամ աննշան փոխելով հեքիաթի բովանդակությունը (օրինակ՝ ի՞նչ պետք է աներ Կարմիր Գլխարկի տատիկը, որպեսզի իրեն գայլը չուտեր):

Ուսուցիչն ինքը պետք է ընտրի աշակերտներին առաջադրվող հանձնարարությունները՝ ելնելով վերջիններիս անհատական առանձնահատկություններից:

Իրենց ներուժին համապատասխան տրված առաջադրանքների կատարման արդյունքում սովորողներն աստիճանաբար ձեռք են բերում ինքնուրույն ընթերցելու, ընթերցածի շուրջ մտորելու, եզրահանգումներ կատարելու և ձեռք բերած տեղեկատվությունը երևակայության ուժով հարստացնելու կարողություններ:

Նկարչական գործունեություն

Նկարչական ստեղծագործական գործունեությունը ենթադրում է հետևյալ պահանջների կատարում.

- տրված հատվածի, հերոսի, նկարաշարի պատկերում,
- հատվածի, ստեղծագործության կամ հերոսի տրամադրության պատկերում,
- նկարաշարի կազմում,
- ապիլացիա, ծեփում, գրքի մակետի պատրաստում, նկարիչների նկարազարդումների դիտարկում և քննարկում,
- նկարային պլանի կազմում:

Արդյունավետ է տվյալ ստեղծագործության բովանդակության շուրջ նկարաշար կազմելու մեթոդը:

Աշխատանք՝ նկարազարդման շուրջ: Տարրական դասարաններում այս աշխատանքն սկսվում է ծավալով փոքր մանկական գրքերի նկարազարդումներից և նկարների վերլուծությունից: Գրաճանաչության ուսուցման դասերին անհրաժեշտ է երեխաների ուշադրությունը կենտրոնացնել նկարված հերոսների դիմախաղի և դիրքերի վրա: Որպեսզի սովորողներն առավել խորությամբ ընկալեն հերոսի զգայական վիճակը, կարելի է կիրառել հետևյալ առաջադրանքը. <<Փորձե՛ք անել այնպես, ինչպես պատկերված է նկարում: Ի՞նչ զգացիք: Պատմե՛ք>>: Նկարազարդման վերլուծությունը նախապատրաստական փուլ է մնջախաղի առավել բարդ ձևի կիրառման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների ինքնուրույնությունն ու ստեղծագործական կարողությունները ձևավորվում և զարգանում են աստիճանաբար՝ դասից դաս, դասարանից դասարան: Դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը:

Մեր իրականացրած ուսումնասիրությունների ընթացքում բացահայտեցինք, որ տարրական դասարաններում ուսուցման գործընթացում դեռևս գերակշռում է աշխատանքի ընդհանուր ձևը, երբ աշակերտների գործողությունները հիմնականում կախված են ուսուցչի անմիջական հրահանգներից: Այսպիսի գործողությունները արգելակում են երեխաների զարգացումը և արդեն հինգերորդ դասարանում սովորողները հայտնվում են անօգնական վիճակում՝ գրքի շուրջ իրականացվող ինքնուրույն աշխատանքի, առաջադրանքների ինքնուրույն լուծման, ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարման ընթացքում: Առաջադրանքների ծավալը նրա ուժերից վեր է դառնում, աշխատանքի տեմպը՝ դանդաղ:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ մայրենիի դասավանդման ընթացքում պետք է հիմնական նպատակ դարձնել զարգացնելու երեխայի երևակայությունը, ինքնուրույնությունը և ստեղծագործական պոտենցիալը: Սա ի զորու է դպրոցականների ուսուցման գործընթացում բազմաթիվ կարևոր խնդիրներ լուծելու՝

- ինքնուրույնության և նախաձեռնողականության հարցը,
- մտածողության զարգացում,
- պատկերացումների ընդլայնում,
- խոսքի բոլոր կողմերի զարգացում:

Կարևոր է, որ այդ աշխատանքներն իրականացվեն ճիշտ կազմակերպված մեթոդական համակարգով: Միայն այս դեպքում կարող են մայրենիի ուսուցման աշխատանքներն արդյունավետ լինել և նպաստել աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1 Ամիրջանյան Յու., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար, երկրորդ՝բարեփոխված հրատ, Երևան, 2005,

3. ՄկրտչյանԱ.: Այրեկսի բուհական ծրագրի կենսագործումը և կրթության բարեփոխումների ընթացքը Հայաստանում, Մանկավարժություն, 2004

4. Մկրտչյան Մ.: Ժամանակակից դիդակտիկայի հիմնահարցերը (ըստ Դյաչենկոյի), Մանկավարժություն, 2005/ 5,

5. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Ե., 2012